

## ՂՈՒԿԱՍ ԿԱՐՆԵՑՈՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

### ՀԱՍՄԻԿ ԱՍԻՐՋԱՆՅԱՆ

Ներկայացված հոդվածում արժանահավատ նյութերի հիմքով ներկայացված է կաթողիկոս Ղուկաս Կարնեցու (1780-1799) տպագրական գործունեությունը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցու նախաձեռնությամբ 1771 թ. էջմիածնում ստեղծվում է առաջին տպարանը: Երեք տարի անց Սիմեոն Երևանցու կողմից կառուցվում է նաև թղթի գործարան: Հաջորդ Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին հաջողվեց շարունակել տպարանի գործունեությունը: Տպարանում նրա օրոք լույս ընծայված առաջին գիրքը Սիմեոն Երևանցու «Պարտավճարն» էր: Դրան հետևում են «Սաղմոսարան», «Ժամագիրք», Հովսեփոս Եբրայեցու «Պատմությունը», «Շարական» (հոգևոր երգերի ժողովածու) և այլն: Իր գոյության ողջ ընթացքում տպարանում լույս տեսան հոգևոր, կրթական, պատմական բովանդակությամբ շուրջ ութ գիրք:

Հողվածում փորձ է արվել վերլուծել տպագրատան զարգացման փուլերի և գործունեության դադարեցման պատճառները: Տպարանի գործունեության վերելքներն ու վայրէջքները պայմանավորված էին ներքին և արտաքին մի շարք գործոններով:

**Բանալի բառեր** – տպագրություն, Ամենայն հայոց կաթողիկոս, Ղուկաս Կարնեցի, թղթի գործարան, էջմիածին, քաղաքական, սոցիալ-տնտեսական, գիրք, տպարան

Հայ տպագրության պատմության մեջ կարևորագույն իրադարձություն էր 1771 թ. կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու (1763-1780) Հայաստանում հիմնադրած առաջին՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ անվանակիր տպարանը և թղթի գործարանը (1774-1775 թ.): Դրանց գործունեությունը կաթողիկոսի մահից հետո որոշակի անկում ապրեց: Այդուհանդերձ, նրա մահից հետո կաթողիկոսական գահին զբաղեցրած Ղուկաս Ա Կարնեցու (1780-1799) առաջնորդության սկզբնական շրջանում էջմիածնի տպարանը ոչ միայն պահպանեց իր գոյությունը, այլև այնտեղ կարևորագույն գրքեր հրատարակվեցին. «Իսկ տպագրատունն թեպետ եւ անկաւ յառաջին վայելչութեանցն իւրոց, այլ այնուամենայնիւ խնամօք պահպանեալ տակաւին եւս ի լոյս ընծայէ զկարի կարեւոր մատեանս եկեղեցական եւ զայլս»<sup>1</sup>:

Ղ. Կարնեցու կրթամշակութային գործունեությանը պատմագիտական գրականության մեջ տրվել են հակասական գնահատականներ, այդ թվում և կաթողիկոսի տպագրական գործունեությանը: Այսպես, ազգագրագետ, աստվածաբան Մելիքսեթ Մսերյանցը գրում է, որ Կարնեցին

<sup>1</sup> **Յովհ. Շահխաթունեանց**, Ստորագրություն կաթողիկե էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, Ս. էջմիածին, 2014, հ. Ա, էջ 73:

Միմեոն Երևանցու ձեռնարկած բոլոր հաստատությունները ցրել է, իսկ թղթի գործարանը 1783 թ. քանդել է տվել և փոխարենը՝ «...ի կոփածոյ քարանց նորից շինել զլիճ ընդարձակ ի լուսցումն գոմշոց յամարանի»<sup>2</sup>:

Այնինչ հայտնի է, որ 1783 թ. հունիսին Կարնեցին փորձում է գործարանի համար Թավրիզից քարեր ձեռք բերել՝ «...ի պետս տպագրութեան, քեարխանային (գործարան-Չ. Ա.) մերոյ...: Եվ քարինքն սպիտակ և պարզատեսիլ և անտամարք լինել...»<sup>3</sup>:

Եգոր Խուբովը (Գևորգ Խուբյան, հայ ազատագրական շարժման գործիչ, պատմագիր) կաթողիկոսին անվանում է «անուսումնասեր մեկը»<sup>4</sup>:

Հայ ուսումնասիրողների մի խումբ, անհիմն համարելով նշված կարծիքները, տպարանի ու գործարանի փակումը կապել է երկրի անկայուն քաղաքական իրավիճակի, օտար ասպատակությունների ու արշավանքների հետ<sup>5</sup>: Նրանք հայտնում են, որ թղթի գործարանը կառուցված էր Էջմիածնի պարիսպներից դուրս և կողոպտվել ու ավերվել է օտարների կողմից: Ավելին, Չ. Շահխաթունյանցը գրում է. «Այլ զկնի վախճանի նորա (Ս. Երևանցու - Չ. Ա.) ի պատճառս յարուցման պատերազմաց ի զանազան նահանգակալ իշխողաց ի վերայ միմեանց ի դաշտի աստ Արարատեան՝ շուրջ զայսու պատրիարգական Աթոռով, խանգարեցան մեծ մասամբ եւ գլխովին իսկ գործարանն թղթաշինութեան, զի գոլով արտաքոյ պարսպին, երկաթեայ եւ պղնձեայ գործիք նորա յափշտակեալ ի զօրաց ասպատակողացն՝ ցան եւ ցիր եղեն ի հեռաւոր տեղիս...»<sup>6</sup>:

Սույնից կարող ենք եզրակացնել, որ թղթի գործարանը Կարնեցուն էր փոխանցվել խիստ անմխիթար, կիսակողոպտված վիճակում, և կաթողիկոսը պետք է մեծ աշխատանք տաներ այն նախկին վիճակին բերելու համար:

Նշված կարծիքները, լինելով հիմնավոր, այնուամենայնիվ ամբողջական չեն արտահայտում ժամանակաշրջանի մշակութային կյանքի անկման պատճառները: Ղ. Կարնեցու անձի և գործի համակողմանի քննությունը վեր է հանում այն բոլոր հանգամանքները, որոնք պատճառ դարձան տպագրական գործի որոշակի անկման<sup>7</sup>: Սույն հոդվածով փոր-

---

<sup>2</sup> Մ. Մսերեան, Պատմութիւն կաթողիկոսաց Էջմիածնի. ի Միմեոնէ մինչ յՉովհաննէս Ը, Մոսկուայ, 1870, էջ 11-12:

<sup>3</sup> «Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1780-1785)», հ. Ա, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի (այսուհետև՝ Դիվան...), հ. Ա, Եր., 1984, էջ 374-375:

<sup>4</sup> Ե. Խուբովը նման կարծիք արտահայտել է իր աշխատության մեջ, որի ձեռագիրը պահվում է Մատենադարանում: Տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. չ<sup>մ</sup> 2766:

<sup>5</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա, Եր., 1964, էջ 67: Դիվան..., հ. Ա, էջ 42: Մ. Օրմանեան, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, հ. Բ, 1914, էջ 3235-3236: Գ. Աղանեանց, Դիան հայոց պատմութեան, գիրք Դ, Թիֆլիս, 1899, էջ ԾԴ-ԾԵ:

<sup>6</sup> Յովհ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 73:

<sup>7</sup> Ղ. Կարնեցու տպագրական գործունեության վերաբերյալ տեղեկությունները հիմնականում ներկայացված են հայկական մշակույթի վերաբերյալ տարբեր աշխատություններում ու հոդվածներում: Դրանց հեղինակների մի մասը սահմանափակվել է

ձել ենք համակարգել ու համեմատել տարբեր ժամանակներում Ղուկաս Կարնեցու տպագրական գործունեությանը տրված գնահատականները, հերքել նրա անձի շուրջ ձևավորված միակողմանի կարծիքը, տուրք տալ նրա անձը ճշմարտացի ու արդարամտորեն ներկայացնող հեղինակներին, վեր հանել մշակութային գործչի նրա իրական կերպարը:

Ղուկաս Կարնեցու կողմից Էջմիածնի տպարանում տպագրված առաջին գիրքը Սիմեոն Երևանցու «Գիրք որ կոչի պարտավճարն»<sup>8</sup> էր, որի հրատարակությունը վերջինս չհասցրեց ավարտել՝ մահից առաջ պատվիրելով կիսատ չթողնել այն<sup>9</sup>: Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Հովսեփ Արղությանի (1773-1801) առաջարկին՝ «Պարտավճարի» տպագրման առաջնայնությունը զիջել Ս. Պետերբուրգում գործող Գրիգոր Խալդարյանի տպարանին, կաթողիկոսը մերժում է նշելով, որ գերադասելի է, որ նման կարևոր գիրքը Էջմիածնի տպարանում լույս տեսնի<sup>10</sup>:

1782 թ. հունվարին Ղ. Կարնեցին Հ. Արղությանին «Պարտավճարի» տպագրության վերաբերյալ գրում է. «Ժ (10) տետր յառաջագոյն էր տպեցեալ յաւուրս լուսահոգոյն (Սիմեոն Երևանցու-Հ. Ա.), Թ (9) տետր ևս այժմ տպեցաւ, գոյ էս քանի մի տետրաչափ տպելի, իբրու Գ (3) կամ Դ (4), այն ևս մինչեւ ցբարեկենդանսն ելանելոց է ի տպագրութենէն, և աւարտելոց է բոլոր գիրքն»<sup>11</sup>: Այն Կարնեցու օրոք լույս տեսած առաջին գիրքն էր:

Ըստ որոշ հեղինակների՝ «Պարտավճարը» լույս է տեսել Էջմիածնում՝ 1779 թ.: Բայց նախ՝ այդ ժամանակ Սիմեոն Երևանցին դեռևս ողջ էր, երկրորդ՝ այդ թվականին տպագրված չլինելու վերաբերյալ վկայում են Հովսեփ Արղությանի և Ղուկաս Կարնեցու նամակները<sup>12</sup>:

Գյուտ Աղանյանցը «Պարտավճարը» թվագրում է 1784 թ.՝ նշելով, որ այն տպագրվել է Խաչիկ իշխանի միջոցներով (հավանաբար նկատի ունի Կ. Պոլսում բնակվող ծագումով ջողայեցի Խաչիկ Պողոսյանին, որը Կարնեցուն բազմիցս ընդառաջել է տպագրական աշխատանքներում)<sup>13</sup>:

«Պարտավճարին» հաջորդում է «Ատենի ժամագրքի»<sup>14</sup> կամ ուղղակի «Ատենիի» («Գիրք ժամանակագրութեանց սրբոյ եկեղեցոյս Հայաստանեայց եւ կարգաւորութեան սաղմոսացն Դաւթի մարգարէին»)

---

սոսկ նրա տպած գործերի թվարկմամբ:

<sup>8</sup> «Պարտավճար» կոչվող գիրքը բովանդակում էր Սիմեոն Երևանցու խրատներն ու հորդորները՝ ուղղված իր թեմի բնակիչներին ու հոգևորականներին, կաթողիկոսի դավանաբանական, աստվածաբանական տեսությունները, նրա ժխտողական վերաբերմունքը կաթոլիկ դավանաբանությանը և այլն:

<sup>9</sup> Տե՛ս **Ռ. Իշխանյան**, Հայ գիրքը. 1912-1920, Եր., 1981, էջ 96:

<sup>10</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. հ<sup>մ</sup> 3738, թ. 174ա, ձեռ. հ<sup>մ</sup> 4496, թ. 52, **Գ. Աղանեանց**, նշվ. աշխ., էջ 270:

<sup>11</sup> **Գ. Աղանեանց**, նշվ. աշխ., էջ 288:

<sup>12</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. հ<sup>մ</sup> 3738, թթ. 174ա, 184ա, նաև՝ «Армяно-русские отношения в XVIII веке», сборник документов под ред. акад. М. Нерсисяна, т. IV, Ер., 1990, док. 163, с. 260-261:

<sup>13</sup> Տե՛ս **Գ. Աղանեանց**, նշվ. աշխ., էջ ԾԵ-ԾԶ:

<sup>14</sup> *Ժամագիրք քրիստոնեական հնագույն ծիսական մատյաններից հանված եկեղեցական արարողակարգերի, աղոթքների, քարոզների, հոգևոր երգերի ժողովածու:*

տպագրությունը<sup>15</sup>: Գրքի երկրորդ տիտղոսաթերթի վերնագիրն է «Ժամագիրք ատենի, յորում պարունակեն երեք գիրք սրբոյ եկեղեցոյս մերոյ ժամանակագրութեանց»: Գիրքը տպագրվում է դարձյալ Խ. Պողոսյանի խնդրանքով:

Կաթողիկոսը «Ժամագիրքը» տպագրելու մտադրություն ուներ դեռևս 1781 թ. ամռանը, երբ Էջմիածնում սպասում էին Արևմտյան Հայաստանից ուղարկվելիք տպագրաթղթին՝ գրքի սկիզբն արարելու համար<sup>16</sup>: Սակայն տպագրությունը հետաձգվում է, քանի որ Խ. Պողոսյանի խոստացած գումարի կեսն է ուղարկվում: Գրքի հիշատակարանում հրատարակության թվականը նշված է 1784, բայց ենթադրվում է, որ տպագրությունն ավարտվել է ավելի ուշ: Ըստ Կարնեցու նամակների հրատարակիչ Վ. Գրիգորյանի՝ «Ատենիի» տպագրական աշխատանքներն ավարտվել են 1785 թ., բայց այն լույս է տեսել 1786 թ.: Նա հիմք է ընդունում այն հանգամանքը, որ գրքի հիշատակարանում գրանցումներ կան 1785 և 1786 թթ., որոնք վերաբերում են տպագրիչներին և գրքի տպագրական աշխատանքներին ընդառաջող մարդկանց: Գ. Աղանյանցը «Ժամագրքի» տպագրման ժամանակ է համարում 1787 թվականը<sup>17</sup>: Վերջինիս կարծիքը հիմնված կարող էր լինել Կ. Պոլսում Էջմիածնի նվիրակ<sup>18</sup> Իսահակ վարդապետին Կարնեցու գրած նամակի վրա (1787 թ. հունվարի 7), որ «Ատենիի» տպագրությունը թեև հյուսիսկովկասյան արշավանքների պատճառով հետաձգվել էր, բայց ի վերջո ավարտին է հասել<sup>19</sup>: Ռ. Իշխանյանը գրքի հրատարակման տարի է նշում 1785 թ.:

Ղ. Կարնեցին կարևորում էր «Ժամագրքի» հրատարակումը, քանի որ այն պարունակում էր Հայաստանյայց եկեղեցու ծիսակարգը, ինչով առաջնորդվում էին հոգևոր արարողակարգերի ժամանակ<sup>20</sup>: Այդ նպատակով գրքից մեկական օրինակ, «Տոնացույցով»<sup>21</sup> հանդերձ, ուղարկվում է Կ. Պոլսի գրեթե բոլոր հայկական եկեղեցիներին:

1787 թ. լույս տեսան Հովսեփոս Երբայեցու «Պատմությունը» («Գիրք պատմութեանց Յովսեփոսի Երբայեցոյ արարեալ յաղագս Պատերազմին հրէից ընդ հռովմայեցիս և աւերման Երուսաղէմի») և «Սաղմոս Դաւթի որ եւ կոչի Սաղմոսարան» կամ պարզապես՝ «Սաղմոսարան»<sup>22</sup>: Վերջինը մոտ 800 տպաքանակով տպագրվեց Հնդկաստանի Սուրաթ քաղա-

<sup>15</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. Հ<sup>մ</sup> 4538, թ. 161ա:

<sup>16</sup> Տե՛ս Դիվան..., հ. Ա, էջ 64-265:

<sup>17</sup> Տե՛ս Գ. Աղանեանց, նշվ. աշխ., էջ ԾԵ -ԾԶ:

<sup>18</sup> *Նվիրակ՝ թեմի կողմից գործուղված անձ, որը պետք է տվյալ վայրում հավաքեր հոգևոր հարկը, ժողովարարություն՝ հանգանակություն կատարելու հոգուտ թեմի, զբաղվելու հոգևոր այլ հարցերով:*

<sup>19</sup> Տե՛ս «Դիվան հայոց պատմության. Ղուկաս Կարնեցի (1786-1792)», հ. Բ, աշխատասիրությամբ Վ. Գրիգորյանի, Եր., 2003, էջ LXX, LXXI, 173:

<sup>20</sup> Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ 169, 173, 174-175:

<sup>21</sup> «Տոնացույցի» (տարեցույց, օրացույց) տպագրումն ուներ հայ եկեղեցու ծեսերի ու արարողակարգերի մեջ նմանություն և միասնականություն մտցնելու նպատակ:

<sup>22</sup> Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ LXX- LXXVI, LXXII:

քի բնակիչ Գրիգոր Խոջաջանյանի տրամադրած գումարով:

Հովսեփոսի «Պատմությունը» խնդրել էր տպագրել դարձյալ Խ. Պոդոյանը՝ իր միջոցներով, ինչի մասին տեղեկանում ենք 1784 թ. նոյեմբերի 18-ին Կարնեցու՝ նրան գրած նամակից: Կաթողիկոսը սկզբում հրաժարվում է՝ պատճառաբանելով, որ գրքի հայերեն թարգմանված երկու տարբերակներում առկա են սխալներ, իսկ այլ ձեռագիր օրինակներ չկան համեմատելու համար: Նա տեղեկացնում է, որ անգամ նոր օրինակ ձեռք բերելու դեպքում գրքի տպագրությունն անհնարին կլինի, քանի որ «չունինք զանդորր ժամանակս և զհանգիստ կեանս»<sup>23</sup>:

Հնարավոր է, որ կաթողիկոսը հրաժարվում էր առաջարկից՝ ելնելով Խ. Պոդոյանի նկատմամբ անվստահությունից, քանի որ վերջինս, ինչպես տեսանք, «Ատենիի» համար խոստացած գումարի կեսն էր ուղարկել: Կարնեցին այնուամենայնիվ իրագործում է գրքի տպագրությունը, քանի որ կարևորում էր այն: Ըստ Գ. Աղանյանցի՝ գիրքը լույս է ընծայվել 1791 թ.<sup>24</sup>:

1787 թ. օգոստոսի 25-ին Ղուկաս Կարնեցին Հնդկաստանում բնակվող հայ ազգային գործիչ Շահամիր Շահամիրյանին գրում է. «Տպարանն մեր անխափան ի բանի է, յորում յառաջագոյն զՊարտավճար գիրքն հոգելոյս հայրապետին և զԱտենի ժամագիրքն տպագրեալ, ... և յետ այնոցիկ զՅովսեփոս պատմագիրքն ևս տպագրեալ ւարտեցամք...»<sup>25</sup>:

Գրածից կռահում ենք, որ չնայած աննպաստ պայմաններին, տպարանը հասել էր իր գործունեության բարձրակետին: Այնուհետև լույս են ընծայվում ևս երկու գիրք. «Խորհրդատետր»<sup>26</sup> (1788) և «Շարակնոց երաժշտական երգեցումնք հոգեւորականք» (1789): 1793 թ. տպագրվեց Սիմեոն Երևանցու «Տաղարան փոքրիկը»:

Այսպիսով, մինչև 1793 թ. տպարանում լույս է ընծայվում յոթ գիրք:

Գ. Աղանյանցը թվարկում է Ղ. Կարնեցու օրոք տպագրված հինգ անուն գիրք. «Պարտավճար», «Ժամագիրք», «Հովսեփոսի պատմագիրք», «Շարական» և «Մաշտոց»<sup>27</sup> կարծիք հայտնելով որ դրանք միայն հայտնիներն են, «... իսկ ինչը մեզ չի հասել կամ հիշատակություն չկա, չգիտենք»<sup>28</sup>:

Ինչպես տեսնում ենք, Գ. Աղանյանցի ցանկում բացակայում են «Խորհրդատետրը» և «Տաղարանը»:

Ըստ ուսումնասիրողների՝ 1788 թ. հետո ընկած տարիներն անընդամենը տպարանում տպագրական գործընթացի համար: Վ. Գրիգորյանը «Տաղարանը» համարում է տպարանում լույս տեսած վերջին գիրքը<sup>29</sup>: Մոտ

<sup>23</sup> Նույն տեղում, հ. Ա, էջ 482, 486:

<sup>24</sup> Տե՛ս Գ. Աղանյանց, նշվ. աշխ., էջ ԾԵ -ԾԶ:

<sup>25</sup> Դիվան..., հ. Բ, էջ 276:

<sup>26</sup> Գրքի ամբողջական անվանումն է «Խորհրդատետր սրբազան պատարագի ըստ արարողութեան սրբու եկեղեցոյս Հայաստանեայց»:

<sup>27</sup> Մաշտոց՝ ծիսարան, Հայ առաքելական եկեղեցու ծիսական գիրք, որը պարունակում է ձեռնարկի և խորհուրդների կարգը և աղոթքները:

<sup>28</sup> Գ. Աղանյանց, նշվ. աշխ., էջ ԾԵ -ԾԶ:

<sup>29</sup> Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ LXX:

չորս տարի ընդմիջումից հետո «Տաղարան փոքրիկի» տպագրվելն ու փոքրածավալ լինելը (45 էջ) մի կողմից վկայում են կաթողիկոսի ջանքերի մասին՝ վերսկսել տպագրական գործն ու պահպանել տպարանը, մյուս կողմից փաստում են, որ տպարանը կանգնած էր մեծ դժվարությունների առաջ:

Կարծում ենք, սակայն, որ տպարանի վերաբացումը չէր կարող սահմանափակվել միմիայն նշված փոքրիկ տպածրոյով: Բնականաբար դրան պետք է հաջորդեին նոր արգասիքներ: Այն, որ տպարանում տպագրվել է «Մաշտոց», վկայում են Ղուկաս Կարնեցու նամակները: Դեռևս 1788 թ. հունիսի 21-ին և 1789 թ. փետրվարին Սուրաթ քաղաքում Ս. Աթոռի նվիրակ Եփրեմին նա գրում է, որ նույն քաղաքում բնակվող Էջմիածնի գործակալ Հոհանջան (Յոհանջան) Գերաքյանին (Հակոբյանին) խոստացել է ի հիշատակ նրա ու ընտանիքի անդամների «Շարական» ու «Մաշտոց» տպել<sup>30</sup>: Տպագրվելիք գրքերի ցանկում նախատեսվում էր նաև «Ճաշոց»<sup>31</sup> գիրք՝ հավանաբար դարձյալ Հ. Գերաքյանի առաջարկով: Մակայն կաթողիկոսը հետագա նամակներում տեղեկացնում է գրքերի տպագրման հետաձգման վերաբերյալ՝ դա կապելով երկրի քաղաքական իրավիճակի և տպագրական պարագաների պակասի հետ. «Մաշտոց» գրքից միայն մի քանի նախնական օրինակներ էին լույս տեսել<sup>32</sup>:

Վերջապես 1791 թ. դեկտեմբերին Կարնեցին Հ. Գերաքյանին գրում է. «Տպագրութիւն Շարակնոցին աւարտեցաւ վաղապէս, բայց վասն ոչ շուտով չորանալոց մրոյն, անագան կազմվեցաւ եւ յետ կազմելոյն եւս այլովք ծանր հոգօք պաշարեցեալ մեր, ոչ ձեռնհաս եղաք շուտով յղել»<sup>33</sup>: Գ. Աղանյանցը «Շարականի» տպագրման թվական չի մատնանշում<sup>34</sup>: Կաթողիկոսը դժգոհ էր գրքի տպագրությունից. Կ. Պոլսից ուղարկված տպագրաթղթի մի մասը ճանապարհին վնասվել էր, ուստի մնացորդը տեղում եղած անորակ թղթով էին տպրել: 1790 թ. օգոստոսի 16-ին կաթողիկոսը Մինաս վարդապետին տեղեկացնում է, որ 20 կապոց թուղթը, «...գոր վասն մնացորդի Շարականին յղեալ էիր, էհաս, բայց ոչ ամբողջ, այլ Բայազետոյ յայս կողմն անկեալ էր բեռն ի խոր առու մի եւ թրջեցեալ, որ ոչ եւս պիտոյացաւ»<sup>35</sup>:

1794 թ. Եփրեմ վարդապետին Ղուկաս Կարնեցին տեղեկացնում է «Մաշտոցի» տպագրության վերսկսման մասին, որից վեց օրինակ ուղարկվել էր Հ. Գերաքյանին<sup>36</sup>:

<sup>30</sup> Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ 434-445:

<sup>31</sup> «Ճաշոց ավետարան» կամ «Ճաշոց»՝ ճաշի ժամերին, մինչև երեկոյան ժամերգությունը եկեղեցում ընթերցվող նյութերի արարողական ժողովածու:

<sup>32</sup> Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ 434-445, 450, 374, 683:

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 683:

<sup>34</sup> Տե՛ս Գ. Աղանեանց, նշվ. աշխ., էջ ԾԵ-ԾԶ:

<sup>35</sup> Դիվան..., հ. Բ, էջ 551:

<sup>36</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. Հ<sup>4</sup> 4538, թ. 17ա:

Ռ. Իշխանյանը գրում է, որ 1787-1799 թթ. լույս տեսան «Մաղմուսարան», «Խորհրդատետր», «Շարականոց» գրքերը<sup>37</sup>:

1793 և 1794 թթ. Կարինի հայ երևելիներ մահտեսի<sup>38</sup> Խաչատուրին ու մահտեսի Սերոբին, Կ. Պոլիս՝ մահտեսի Նիկողայոս Եղիազարյանին գրած նամակներում Կարնեցին նշում է, որ Կ. Պոլսից գնված թղթով տպված «Մաշտոցներն» անհաջող են ստացվել՝ կոպիտ ու կարդալու համար անհարմար: Նա նշված անձանց խնդրում է բարակ և սպիտակ թուղթ գնել և ուղարկել տպարան<sup>39</sup>:

Այսպիսով, ի տարբերություն Վ. Գրիգորյանի, որի կարծիքով «Մաշտոցը» լոկ նպատակ մնաց Կարնեցու համար<sup>40</sup>, Գ. Աղանյանցի ցանկում, ինչպես տեսանք, գիրքն ունի իր պատվավոր տեղը:

Տպարանի գործունեությունն այդքանով սահմանափակվեց: Կաթողիկոսին չհաջողվեց այն ավելի ծաղկեցնել ու բեղմնավոր դարձնել այն, ինչը մեծ չափով պայմանավորված էր երկրի ներքին ու արտաքին աննպաստ վիճակով: Սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը դժվարացնում էր գրքերի տպագրությունը, որը բավականին ծախսատար, գործիքներ ու մասնագետ կադրեր պահանջող գործ էր:

Գ. Աղանյանցը գրում է, որ տպարանը գործել է 1780 թվականից մինչև 1791 թ.<sup>41</sup>: Սույն տեղեկատվությանը հակադարձում է այն փաստը, որ 1793-1794 թթ. ընթացքում, ինչպես տեսանք, կաթողիկոսն զբաղված էր տպագրաթղթի հայթայթման գործով: Ավելին, Աղանյանցը տպագրել է Կարնեցու 1794 թ. Կարինի հայ երևելիների ուղղած նամակը, որով պատվիրում է տպագրաթուղթ գնել և ուղարկել Էջմիածին<sup>42</sup>: Հարց է ծագում, ինչո՞ւ է Աղանյանցը տպագրատան աշխատանքները համարում իրականացված մինչև 1791 թ.: Նա հավանաբար հաշվի էր առել այն, որ տպարանում լույս տեսած իրեն հայտնի վերջին գիրքը 1791 թ. հրատարակված «Շարականն» էր:

Ղուկաս Կարնեցին նպատակադրվել էր լույս ընծայել այլ գործեր ևս, այդ թվում՝ հայ պատմիչների երկեր: Նրա նամակներից տեղեկանում ենք, որ Շ. Շահամիրյանը խնդրել էր տպագրել Մովսես Կաղանկատվացու «Աղվանից պատմությունը»: Կարնեցուն հաջողվում է 1791 թ. Գանձասարի հոգևոր գործիչների միջոցով ձեռք բերել գրքի ևս մեկ օրինակ՝ բոլոր եղածները համեմատելու և գիրքը կատարյալ տարբերակով տպելու համար: Բայց օրինակը կաթողիկոսին չի գոհացնում, քանի որ «խառնագիր էր և կրկին ոչ բավարար համեմատության համար»<sup>43</sup>:

<sup>37</sup> Տե՛ս Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 98:

<sup>38</sup> Երուսաղեմ ուխտ գնացած անձնավորություն:

<sup>39</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. Հ<sup>4</sup>ր 4538, թթ. 16բ-17ա:

<sup>40</sup> Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ LXXX:

<sup>41</sup> Տե՛ս Գ. Աղանեանց, նշվ. աշխ., էջ 629:

<sup>42</sup> Տե՛ս նույն տեղը, էջ ԾԶ:

<sup>43</sup> Դիվան..., հ. Բ, էջ 618-619:

Պոլսաբնակ ունևորներ Եսայի Մասեհյանն ու պարոն Նիկողայոսը կաթողիկոսին խնդրել էին տպագրել Ղազար Փարպեցու ստեղծագործությունը: (Կարծում ենք, հիշյալ Նիկողայոսը նույն Նիկողայոս Եղիազարյանն է, որի միջոցով կաթողիկոսը թուղթ էր ձեռք բերում Կ. Պոլսից): Կարնեցին Կ. Պոլսի նվիրակ Իսահակից փորձում է տեղեկանալ արդյո՞ք նշված երևելիները հաստատական են իրենց որոշման մեջ<sup>44</sup>:

Ինչպես տեսանք, նա նպատակադրվել էր տպագրել նաև «Ճաշոց»:

1783-1789 թթ. և հետագայի նամակներում<sup>45</sup> Կարնեցին խոսում է տպագրական աշխատանքների դժվարությունների՝ տպագրության համար անհրաժեշտ պարագաների բացակայության (դրանց մի մասը բերվում էր դրսից, ինչը երկար ժամանակ ու ծախսեր էր պահանջում, թղթի մի մասը մինչև Էջմիածին հասնելը ճանապարհին շարքից դուրս էր գալիս), թղթի սղության ու անորակության և այլնի մասին: Կարնեցու նամակները փաստում են, որ թուղթ գնելու հանձնարարականներ ստացող անձինք երբեմն անհմուտ և անբարեխիղճ են եղել այդ գործում, իսկ գնված ապրանքի կեսը՝ ոչ պիտանի: 1790 թ. հունիսին կաթողիկոսը Կարինի գործակալ Հայրապետին հանձնարարում է անհպաղ ուղարկել Էջմիածնի տպարանի համար Կ. Պոլսից ստացված թուղթը:

Լսելով, որ Կարինում երեք ունևոր հայ որակյալ թուղթ ունեն, կաթողիկոսն այնտեղի իր ծանոթներ Խաչատուրին ու Սերոբին խնդրում է այդ մարդկանցից, ինչպես նաև այլ վայրերից թուղթ գնել<sup>46</sup>: Կաթողիկոսի փնտրտուքների արդյունքում որոշակի քանակությամբ թուղթ է գնվում նաև Երևանի մի քանի անձանցից<sup>47</sup>:

Տպարանը մշտապես ունեցել է աշխատողների պակաս, ինչը եղել է աշխատանքները խոչընդոտող կարևորագույն հանգամանք: Ըստ Վ. Գրիգորյանի՝ 1784 թ. մահացել էր միակ թղթագործ վարպետը՝ Նիկողայոսը<sup>48</sup>, ինչը նրան հիմք է տալիս եզրակացնելու, որ այդ թվականին տպարանի աշխատանքները կանգ էին առել:

Դժվարություններից մեկն էլ այն էր, որ տպարանի հրատարակությունները թանկ էին նստում վանքի վրա. հաճախ կաթողիկոսը գրքի տպագրման սկիզբն արարում էր, սակայն մեկենասների խոստացած գումարները կամ տեղ չէին հասնում, կամ բավարար չէին լինում<sup>49</sup>:

Եվ իհարկե, ամենամեծ խոչընդոտը կար և մնում էր օտար տիրապետությունն ու ասպատակությունները: Ահա ինչու Կարնեցին այլևս

<sup>44</sup> Տե՛ս նույն տեղը, հ. Ա, էջ 459, 486:

<sup>45</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. Շ<sup>մ</sup> 4538, թ. 17ա, Դիվան..., հ. Ա, էջ 371, 457, 482, հ. Բ, էջ 345, 370, 399, 457, 542:

<sup>46</sup> Տե՛ս ՄՄ, ձեռ. Շ<sup>մ</sup> 4538, թթ. 16բ-17ա:

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղը, թ. 16բ:

<sup>48</sup> Տե՛ս Դիվան..., հ. Բ, էջ LXXI, LXXVI- LXXVII:

<sup>49</sup> Տե՛ս նույն տեղը, հ. Ա, էջ 481-482, հ. Բ, էջ LXXIII:



հրաժարվում է մեծածավալ արժեքներ ստեղծելուց և սահմանափակվում է խիստ անհրաժեշտ և «թեթև գրքերով», ինչպիսիք էին «Ճաշոցը», «Տոնացույցը» և այլն<sup>50</sup>:

Տպարանի աշխատանքների դանդաղելու պատճառ դարձավ նաև թղթի գործարանի ավերումը: Այն, որ տպարանը մշտապես թղթի կարիք ուներ, վկայում է այն մասին, որ գործարանը կա՛մ չէր հասցնում անհրաժեշտ քանակությամբ թուղթ արտադրել, կա՛մ ժամանակ առ ժամանակ փակվում էր: Թե երբ է վերջնականապես ավերվել թղթի գործարանը, ստույգ հայտնի չէ<sup>51</sup>: Բայց հստակ է, որ 1784 թ. նամակներում Կարնեցին խոսում է թղթի սղության մասին, ինչը կարող է վկայել, որ գործարանն այդ թվականին արդեն չէր աշխատում: 1784 թ. Էջմիածնի տպարանը Կ. Պոլսից էր տպագրաթուղթ ստանում<sup>52</sup>:

Ըստ Վ. Գրիգորյանի՝ գործարանի մինչև 1784 թ. ավերված լինելու մասին է վկայում նաև այն, որ այդ թվականին այն վերականգնելու փորձ է արվել: Դրա նախաձեռնողը նույն Իսահակ վարդապետն էր, որն այդ մասին 1784 թ. ապրիլի 27-ին առաջարկ է ներկայացրել կաթողիկոսին: Սակայն Կարնեցին անիմաստ ու անժամանակ է համարել գործարանի վերականգնման աշխատանքները՝ պատճառաբանելով երկրի անկայուն վիճակն ու աշխատողների պակասը. «Իսկ վասն թղթատանն, որ ցաւելով գրես, մի թէ մեք ոչ ցաւիմք, այլ ժամանակս ձեռնտու չէ, մանաւանդ՝ խղճալի Նիկողայոսն ևս վախճանեցաւ և նոյն արհեստին այլ գիտող ոչ գոյ...»<sup>53</sup>: Սույն խոսքերից երևում է, որ վարդապետը մեղադրել է կաթողիկոսին մշակութային անտարբերության մեջ:

Ղուկաս Կարնեցու դիրքորոշումը բացատրվում է երկու հանգամանքով. նախ՝ Էջմիածինն անհրաժեշտ միջոցներ չունէր նոր հաստատություններ պահելու (թեև դրանք բացվում ու գործում էին հովանավորների նախաձեռնությամբ, բայց զգալիորեն սպառում էին նաև Էջմիածնի եկամուտները): Երկրորդ՝ կաթողիկոսը վստահ չէր, որ դրանք ևս չեն ավերվի ու կործանվի թշնամի ժողովուրդների կողմից, և գործադրված ջանքներն իզուր չեն անցնի:

Այնինչ Մ. Օրմանյանը գրում է, որ տպարանի աշխատանքները «...նույն թվականի (1791 թ.-Չ. Ա.) ետքը դադարած են, երբոր Խոյի և Երեւանի բռնապետներուն միջեւ տեղի ունեցած պատերազմներուն պատճառով, Էջմիածին իբրև բերդ գործածուեցաւ...»<sup>54</sup>:

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղը, հ. Ա., էջ 482:

<sup>51</sup> Ա. Աբրահամյանը ենթադրում է, որ Մ. Երևանցու կառուցած գործարանը կարճ կյանք ունեցավ՝ մոտ 5-6 տարի: Եթե գործարանը հիմնադրվել էր 1775 թ., ուրեմն այն պետք է ավերված լիներ անմիջապես Երևանցու մահից հետո: Տե՛ս **Ա. Աբրահամյան**, նշվ. աշխ., էջ 67:

<sup>52</sup> Տե՛ս Դիվան..., հ. Ա., էջ 456, 459:

<sup>53</sup> ՄՄ, ձեռ. հ<sup>մ</sup> 2803, թ. 796:

<sup>54</sup> **Մ. Օրմանեան**, Ազգապատում, Կոստանդնուպոլիս, էջ 3235-3236:

Ճեմարանցին (Հովսեփ Գրիգորյան) ևս գրում է, որ Ս. Երևանցու հիմնած տպարանն ու թղթի գործարանը գործել են մինչև 1791 թ., այդ ընթացքում մի քանի հրատարակություններ են լույս տեսել, այնուհետև ժամանակավորապես դադարել են երկրի խառնակ վիճակի պատճառով<sup>55</sup>:

Այն, որ կաթողիկոսը ձգտել է ոչ միայն պահպանել, այլև հետագայում ընդլայնել ու ծաղկեցնել տպարանի գործունեությունը, փաստում են նրա նամակները, որոնք արտացոլում են տպարանը տպագրական թղթով ու անհրաժեշտ գործիքներով ապահովելու, տպագրական գործը կազմակերպելու և տպարանի գոյությունն ապահովելու նպատակով մեկենասներ գտնելու և միջոցներ հայթաթելու, տպագրության բնագավառի հմուտ գործիչների էջմիածին հրավիրելու ջանքերը: Կ. Պոլսում այդ բնագավառում բարձր համբավ ունեցող Պողոս Արապյանը (1742-1835) վրաց Հերակլ Երկրորդ թագավորի հրավերով գալիս է Թիֆլիս և 1781-1783 թթ. աշխատանքներ իրականացնում վրացական տպարանում: Էջմիածին այցելության ժամանակ Պ. Արապյանը Ղուկաս կաթողիկոսի խնդրանքով օժանդակում է նաև Էջմիածնի տպարանի վերականգնմանը<sup>56</sup>: Կաթողիկոսը Վրաստանից հրավիրել էր այլ հմուտ վարպետների ևս: Նա նաև վրացական արքայից տպագրական դագգահ էր խնդրել, ինչն ուղարկվում է<sup>57</sup>: Կարնեցին անգամ ցանկություն է հայտնել ձեռք բերել Ամստերդամի անգործության մատնված հայկական տպարանի տառերը<sup>58</sup>:

Յավոք, Կարնեցուն ոչ միայն չհաջողվեց շարունակել գործարանի գործունեությունը, այլև այն ի վերջո ավերվեց ու փակվեց:

Այսպիսով, չնայած երկրում առկա ներքին սոցիալ-տնտեսական ու քաղաքական ծանր իրավիճակին, Ղուկաս Կարնեցուն հաջողվեց որոշակի ժամանակով պահպանել տպարանն ու թղթի գործարանը և հրատարակել մի շարք կարևոր գրքեր: Լինելով փոքրածավալ և չունենալով մեծ տպաքանակ, այնուամենայնիվ դրանք կարևոր նշանակություն ունեցան հայ տպագրության զարգացման համար՝ լինելով Հայաստանի առաջին տպարանի պատմության մասը:

**АСМИК АМИРДЖАНЫЯН – О деятельности Гукаса Карнеци в книгопечатании.** В статье на основе достоверных материалов представлена деятельность католикоса Гукаса Карнеци (1780-1799) в книгопечатании. Благодаря инициативе его предшественника католикоса Симеона Ереванци в 1771 г. в Эчмиадзине создается первая типография, а спустя три года и бумажная фабрика. Католикосу Гукасу Карнеци с его связями удастся продолжить деятельность типографии. Первой напечатанной там книгой при Г. Карнеци была “Партавчар” Симеона

<sup>55</sup> Տե՛ս **Ճեմարանցի (Հովսեփ Գրիգորյան)**, Ղուկաս Կարնեցի կաթողիկոս, «Էջմիածին», 1951, թիւ Ը, էջ 33:

<sup>56</sup> Տե՛ս «Հայոց պատմություն», հ. 3, գիրք առաջին, Եր., 2010, էջ 101:

<sup>57</sup> Տե՛ս Դիվան..., հ. Ա, էջ , 392, 403:

<sup>58</sup> Տե՛ս նույն տեղը, հ. Բ, էջ LXXVIII, 358:

Ереванци. Список продолжают: Псалтырь, Часослов, “История иудейской войны” Иосифа Флавия, Малый Тагаран, Шаракноц (сборник шараканов) и др. За время своего существования типография издала около восьми книг религиозного, образовательного и исторического содержания.

В статье сделана попытка анализа этапов и причин прекращения деятельности типографии. Упадок и подъем в деятельности типографии были обусловлены целым рядом внутренних и внешних факторов.

**Ключевые слова:** *книгопечатание, католикос Гукас Карнеци, Эчмиадзин, фактор, политический, социально-экономический, книга, типография, бумажная фабрика*

**HASMİK AMIRJANYAN – *On the Printing Activite of Ghukas Karnetsy.*** – On the basis of reliable materials, we presented the printing activities of Ghukas Karnetsy.

Thanks to the efforts of the previous Catholicos of All Armenians Simeon Yerevantsi, the first printing house was founded in Etchmiadzin in 1771. He also founded the building of the paper factory in 1774. Thanks to the efforts of Catholicos Ghukas Karnecy (1780-1799) and his relations, the printing house had been continuing its activity. "Partavchar" of Simeon Yerevantsi was the first printed book. The following books are Psalter, Breviary, Flavius Josephus's "History of the Jewish War" Small Tagharan, Sharaknots (Hymnal) act. The printing house published about eight books on religious, educational, and historical topics During its existence.

The article attempts to analyze the periods and reasons for the termination of the printing house. The decline and rise of Typography were attributable to a number of internal and external factors.

**Key words:** *typography, Catholicos of All Armenians, Ghukas Karnetsy, paper factory, Etchmiadzin, economic, social-economic, book, printing house*